

ՅԱԼԵԼՈՒԱԾ

(ՄԱՅՐ ԱԹ-ՊՈՒ ԴԻՎԱՆԻՑ)

—•••••—

Պատմութիւն ինչ զվարար բանից նարկաւոր ի ժամանակ Ծեառն Հուկասու Սրբազն կաթուղիկոսին եղելոց, շնչարարութեանց եւ մնալութեանց նորին ի գաւազանազիքս և ի շարս կաթուղիկոսացն զրելի եւ նախազիծ օրինակ:

Տէր ԴԱՅԻԹԱԾ Կարնեցի, Սա էր այր գերաշանձար և նրբանկատ, խոնարհամիտ և հեղալարց, բարեկարգութեանց և սրբութեանց կրօնից սիրող, հօր, վրէժխնդիր և կարգաւորիչ, առ յանցաւորս իր յոյժ անցաւաչար և համբերօղ, և քաջցրարանութեամբ և սիրով և հոգեոր խրատիք ուղղիւ, և առ կարօտեալս և չքաւորս ողորմած և զթածագունեղ, և հարկաւոր պահասութեանց նոցին լուցից և սրտագիւրիչ, և ստորագրեցելոց իւրոց ըստ իւրաքանչիւր չափու և աստիճանի շահող և միթմարիչ թէ ի բանս, թէ ի գործս և թէ յարդիւս, և ըստ ամենայնի միաբանասէր, որ և էր թէկ միաբան շնորհասուն և բազմաշխատ զաւակ Մօր լուսոյ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, Խոկ և յաւորս Ցեառն Յակորայ Համախեցոյ հոգելոյս Կաթուղիկոսին առաքեցեալ էր ի յնուռումէի և ի ուիմ ի գործ նուրիակութեան սրբոյ Աթոռոյս, որ և լիալիր արդեամբք և յիշտակօք եկն ի սուրբ Աթոռու Բոյց ի կենդանութեան լուսահոգի Ցեառն Յակորայ Կաթուղիկոսին ոչ ժամանեաց, այլ եղիս փախանակ և սուրբ մարմինն ի մէջ — զամկալաւաննեն* — ի գագաղի եղեալ, վասն որոյ վզձկեալ սրտիւ կոծ մեծ արարեալ յոյժ կոկեցաւ, վասն զի յոյժ սիրեցեալ էր ի նմանէ, և մանաւանդ՝ մինչ կենդանին էր բազմիցս գրէր զգալն իւր փութեացուցանել վասն որհամին կոնխելոյ, առ ի տեսանել աչօք բացիք և լզգումն իւր լցուցանել, թէպէտ սակայն չեղիւ, վասն որոյ մնացին միմեանց կարօտ, Նւ ապա զիի թաղման նորին՝ զնուրիակական հաշիւն իւր ի մէջ Աստուածակերտի Տաճարին առաջի սրբոյ Միանաւէջ աեցլոյն ի ներկայութեան սիրագումար միաբանից և արքեափիսկոպոսաց ետ կարի աւելի քան զնամանցեալ նուրիակութիւնսն; Նւ միաբանից զնաւորին էրն՝ առաջինն ծերուազարդ և վաղեմի բազմաշխատ լուսարար Նշիաղալոր արքեափիսկոպոսն, որ էր հոգեոր ծնող մեծի սրբազն Հօր մերոյ, որ վարդ արեղայութեանն ընդ մեծին Պօլսոյ Պատրիարք Զաքարիա արքեափիսկոպոսին ի միասին էին

առեալ ի 1200 թուին և ի ամսոյ ու ուժն. և երկրորդ զլիաւորագոյնն էր զիտնական և բանիւրուն Սիմեօն արքեափիսկոպոսն Երևանցի, որ ի նուրբակութենէ մեծին Պօլսոյ ամ մի էր, որ եկեալ էր, և էր աշակերտ նոյնոյ Յակոր հոգելոյս Հայրապետին Շամախեցւոյ, և այլ արհիապան եպիսկոպոսը և շնորհազարդ վարդապետք բազումք, որք և մեծաւ գոհունակութեամբ շնորհակալ եղեալ՝ գովարանեցին զրբազն Տէրն մեր սակս լիալիր արդեանցն և յոդնագիմի հարազառութեանցն, մինչ զի՞ նոյն ինքն գերահանձար արքեափիսկոպոսն Սիմեօն ի մէջ տիրակերտի տաճարին առաջի բազմութեան միաբանիցն առաջ լու ի լու, «Նդրաբը, յորժամ սուրբ Հոգին Աստուած Սրբոյ Աթոռոյս և մեզ նոր փեսայ շնորհեսցէ, այս Առևկաս վարդապետ միրելի եղայրոս մեր արժանի է առ ի լինել նոր փեսային նախաընտիր և անդրանիկ եպիսկոպոս» բոլոր միաբանն ամենեքեան խնդամտութեամբ և բերկրասրտութեամբ որպէս ի միոցէ բերանոյ ասացին, «արժանի է ծշմարտապէս». Եւ ի յասելն զայս Պաղար արքեափիսկոպոսն Աստապատցին նշնուն կոչեցեալ՝ որ էր այր շնորհալի, խաղասաց և ժամանօրհուղ՝ յարեաւ ի տեղողէն և բարձր ձայնիւ ասաց «զուրբ խաչիւն», և զլիաւորագոյնն զգականն ասու սիրով արձակեալք գնացին ուրախութեամբ ի կայեանս իւրիանց Եւ զայս վասն այնորիկ երկարեցի աստ, զի հոգելոյս ծնօղն մեր եռերանեան Կաթուղիկոսն Տէր Սիմեօն, որ զայն ասաց ի վարդապետութեան մարգարէական հոգով հրամայեաց, ըստ իմաստնոյն մարգարէութիւն է իշշմարտաւորի, Քանզի ինքն հրաւիրմամբ Հոգեւոյն սրբոյ եղել Կաթուղիկոսն և Ծայրագոյն Պատրիարք ամենայն հայոց և սրբոյ Աթոռոյս զինի քանի մի ամսոց (որպէս և գրեալ եմք ի վերոյ տեղուղ իւրում) և ի նստիլն իւր ի Աթոռ Հայրապետութեան, զիւր խոստացեալն մարգարէարար ինքն կատարելով՝ յետ սուղ ինչ միջոցի բազմաժողով հանդիսիւ ձեռնադրեաց իրը անգամնիկ եպիսկոպոս զրբազն Հայրո մեր ընդ նույի և Բերթումեան Պետրոս գերիմաստ վարդապետացն նախիչեանցւոց. և գեր քան զբնաւոն կարի սիրելով ի ԱՄՓԴ թուոջն և ի մարտի ամսոյ ԺԱ ի վերայ մեծահոչակ և բարելի մայրաքաղաքին Զմրւոնոյ, արհիապան առաջնորդ և ծայրագոյն նուրիակ կարգեալ, առաքեաց, և վասն առաւել հարազառութեան և արգիւնատրութեան, ոչ կամեցաւ զինի աւարտման առաջին գործոյն բերել զնայլ կրկնի և երերին անգամ նորոգեաց զառաջնորդական և զնուրիակական գործն նորին, և եթող մնալ մինչեւ ցԺԱ ամ և կէս. իսկ ինքն սրբազն Հայրո մեր՝ վասն սիրոյ ամենացանկալի և շնորհատու ծնողին իւրոյ սրբոյ Աթոռոյս և սիրա-

* Նդրաբերով բառերը Ձեռագիր մէջ չեղուած են:

1. Հեռացի մէջ «Առիրիկ ննան»:

գումար և աղաւներամ միաբան եղարցն, ոչ կամէք անդ երկարապէս մնալ և կարօտութեամբ մաշիլ, Այլ միշտ գրէր և թափանձանօք աղաւէք ոչ ևս թողուլ անդ ի վիճակս իւր մնալ այլ ի տեղի իւր զայլ ոք առաքել և զինքն խնդրել. Բայց՝ բուլոր իշխանը և ժողովուրդը վիճակին հոգեոր սիրով կապահեալ էին ընդ առաջնորդին իւրեանց, և քանից բազմակիւք մահարաւ խնդրէին ի յերանեալ հայրապետէն առ ի թողուլ մնալ առ ինքեանս սեպհականապէս ի միխթարութիւն և ի սփոփանս մեծի վիճակին և ինքեանց, և ի մահարովն գրեալ ևս էին թէ՝ որպէս զօաքարիս արքեպիսկոպոսն որ ի մեծն Պօլիս նուիրակէր սրբոյ Աթոռոցից, ըստ խնդրանաց նոցին շնորհեցէր նոցա առ ի մնալ անդ և լինել պատրիարք. նմանապէս և զմեր առաջնորդն մեզ շնորհեցես և զայլս այսպիսէս: Թէպէտ գըրէին իշխանք և ժողովուրդքն, բայց՝ խոնարհամիտ հայրս մեր սիրահար գոլով սրբոյ ծնողին իւրոյ՝ միշտ գրէր և աղաւէք ոչ անսալ մահարական թըղթոց և խնդրանաց ժողովրդեանն, այլ ի բաց ասել և զինքն խնդրել, իսկ ինքն հոգելոյս Հայրապետն ծերացեալ գոլով և պէս պէս վշտօք և ցաւօք և երկար հիւանդութեամբ — մասեցեալ, — նախահոգ լեալ: շուտով զեսայի արքեպիսկոպոսն նախիջևանցի յշեաց ի տեղին նորին, և նմա զրեաց և խնդրեաց առ ի ժամանել առ ինքն ի միխթարութիւն ինքեան ի կենդանութեան իւրում: և զինի մահուանն առձեռն պատրաստ գոցէ, և պիտոյացի սրբոյ Աթոռոցիս ի յաջորդութիւն ինքեան, (Վան զի՝ յայնմամանակի ի մէջ արքեպիսկոպոսաց ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս երկելի և անուանի՝ արժանաւոր և պատշաճաւոր անձինք երկուք էին. առաջինն պատուական հայրս մեր էր՝ որ ներկայ էր, և երկրորդն Զաքարիա արքեպիսկոպոսն և պատրիարքն մեծին Պօլոյս, որ անդ էր. որք ի միասին ըզսուրբ կարգն ի սուրբ Աթոռոջս էին առեալ ի լուսարար Նշիազար արքեպիսկոպոսէն, որպէս և զրեցաք ի վերոյ), Արդ՝ ի 1225 թուուզն և ի յունվարի մթ ըստ գրեցելոյ և հրամանի երանեալ Հայրապետին Սիմէօնի և ըստ բաշանաց սրտին իւրոյ, գերերջանիկ Հայրս մեր լիալիր արդեամբք ժամանեաց առ սուրբ Աթոռո մշտարաշալի ծնողս իւր, և մեծահանդէս ընդ առաջելութեամբ և բազում մեծարանօք գերապէտ պատուեալ եղև. և զերից նուրիական և առաջնորդական արդեանց հաշիւն յոյժ առաւելութեամբ և կրկնապատկութեամբ ետ սրբալասուրբ Հայրապետին, և զրոլոր միաբանն զեր քան զշափն շահեալ՝ միխթարեաց եռապատիկ և քառապատիկ ընծայաբաշխութեամբ ըստ հաշուի երից և չորից ծայրագունից նուրիակաց որբ և բերանալիք օրհութեամբ և գոհութեամբ ընկալեալ շնորհակալ եղեն զմեծութենէ նորին: Այլ և զսուրբ տաճարն Աստուածակերտ և

զտեղին Քրիստոսաւէջ զարդարեաց բազմազան յիշատակօք, ոսկեղինեղ և արծաթեղինեղ, մետափսիդինեօք և ընտիր ընտիր զարդարուք հիանալի տեսաղաց, և ինքն հոգելոյս Հայրապետն Սիմէօն թէ որպիսարար ընկալւ զնա իրրե զհայր զորովագութ. և կամ՝ որպիսի սիրով և յատկեղ պատուի և սեղանակցութեամբ իրրե զիորհրդակից և սրտագիւրիչ իւր պահեաց և մեծարեալ պատուեաց, և արգել առ ինքն մինչև ցվախանան իւր, և ոչ եթող յուրեք երթալ և կամ թէ՝ ինքն սրբական Տէրն մեր յայսբան երկար ժամանակս որ էր տարի և ամիս և որպիսի խոնարհութեամբ և համբերութեամբ և տաժանակիր վշտակցութեամբ եկաց և մաս մինչև ցօր վախճանի նորին, զայն աւելորդ համարիմ գրեւէ:

Արդ՝ ի ՌՄԴԹ թուին և ի յուլիսի 26 յօր Արքավալուի կիւրակէին, երանեալ Հայրապետն մեր Սիմէօն ծերական ցաւօք, տարեկան երկար հիւանդութեամբ, հոգսալի մտօք, ապագայական երկիւղիւ սակա սրբոյ Աթոռոյս և պէս պէս վըշտօք և երջանիկ մահուամբ մինչ վախճան ընկալեալ չուեաց առ մշտարաշալին իւր Քրիստոս. երկիրս մեր խղճալի էր ի յաւերութեան և ի վրդովման երկրականացն՝ հաւատացեալքն ի գերութեան և ի վտարութեան, և տաճիկքն ի գառն աղքատութեան և որպէս որգեկորոյս և վիրաւոր արջ կըրծ լուսմամբ ատամանցն ի կատաղութեան. և սուրբ Աթոռ մայրս մեր և աթոռոյինքս ամենայն ի յերկիւղալի սասանութեան և ի սրտագողութեան, որոց պատճառն եթէ զի՞նչ էին, համառօտակի և կարծ ի կարճոյ գրեալ՝ ծանուցուք՝ սիրելեացդ փոքր ի շատէ:

Արդ՝ իշխաղն Արաց (արքայն Հերակլէս) քանի ամաց ի վեր զառուս և զհարկս ինչ առնոյր ի յիշխաղին երկրիս մերոյ, և որպէս թէ՝ ընդ իշխանութեամբ և ենթ հրամանի իւր ունէր, ոչ բանութեամբ, այլ սիրով և բարեկամական պայմանաւ. և սոքա ևս կամաւորական հարկիւ զիսուն ինչ հարկատային յամեւ մինչեւ ցլինչեւ ցլինչեւ քուման, որ է ի ինսայւ. և հարկատարբն կարի զզուեցուցանէին զնոսա, և ինքեանք ևս գոլով տաճիկք, ներբին մտօք իւրեանց ծանր յանցանք և ամօթ մեծ համարէին կալ ենթ հարկի և ծաւայութեան քրիստոնէից. զան որոյ սնոտի յաւսով ի տկար օգնութիւն շրջակայ երկրաց մերձ և հեռի տաճիկք նշխողաց ոմանց յենլով, սկսան ապստամբիլ և ըզհարկ սակին ոչ տալ, և զիէս պէս կարկատառն պատճառն յառաջ թերել, զարտառու բանս գրելով և իսոսինք. և զի՞ նմանէ առաքեցեալ պատուաւոր իշ-

1. Ֆառարշում բաց է բողոքած Տ. Այմիկոն կարուղիկոսի արռուակալուրիամ տարիների և ամիսների որոշակութիւնը:

խանսում անպատիւ առնելը՝ և ամօթալի յետաս յէլ, և այս դաւ և վէճ մնաց քանի մի միջոց։ Խոկ իշխաղն Արաց՝ որ էր ի վաղուց հետեւ անտի մեծ երախտաւոր երկրիս, որ քանից անդամ սաս արկ պատերազմաւ ի յօտար թշնամեաց զերծուցեալ էր զերփիրս և յատկապէս զիշխողն սորին խիկ, և որպէս թէ զիւրն համարելով, քաղցր աշխամբ հայէր, խիկ ի մինիլ այսպիսի խոսովուժեանց և ապստամբուժեանց, զքաղցրութիւն իւր գառնութիւն փոխելով, և զսէրն ի յատելութիւն, սաստիկ բարփութեամբ սկսաւ յայլ և այլ տեսակ և բարբարոս ազգաց լեռնականաց զանթիւ զօրս ժողովել — և ի վարձու ումելի — զօրս անուանէին Թուչչ Գյան, Դարաղալիսան, Քրիստ, Հերքէզ, Նվիսազք բազմաթիւք, և զայլս այսպիսիս հանգերձ բոլոր զօրոն իւրովք, որք էին Վիլլ, Սում և նէ՛թք հայացունք, և ի տաճկաց անտի ընդ իշխանութեամբ իւրօք եղելոց, Դազանս Բօրչալու, Բայտար և Դամուրչի, Հասանլու, մինչ զի՝ Եղտիք ևս գոյն, և միահամուռ ամենայն զօրքն էին անթիւք և անհամարք մինչեւ ց ասէին ։ թօնիք և թօփսանայիւք հանգերձ, սոսկալի և ահաւաւոր տեսելեամբ։ Եւ յարուցեալ ի Տփիսիզոյ իրու վկարկտարեր և զորոտալի ամբ և զգարնանազայր գետ, ի ՌՄՌ թուին, և յօգոստոսի² հանգերձ փողովք և թմազկօք և այլ «այծ» ածային — նուագարնօք նաղարախանայ կոչեցելովք՝ եմուտ ի, երկիրս մեր, և երկրականքս յառաջազոյն իրազեկ լեալ գտշտեան և պատրաստութեան նորա զօրու ծանութագուղութեամբ և երկիւղիւ մեծաւ սկսան զերկիրս մեր ի ինակչաց դատարկիւ զերկրական տաճիկսն, որք հեռաւորք էին, տանիլ ի գղիակն Երևանու առնեքեանս, և ամենայն պատրաստութեամբ զբերթն և զըրջակայս նորին ամբացուցանել, խիկ զմերազնայ հայսն ի Բայզաղիս անցուցանել, և զերկիրս ի յամայութեան թողուլ, որ էր ի ժամանակս կատառուց, զըրայն և զցորեանն շեղչակուտեալ յամենայն գեօղորայս, և երկիրս մեր ամենայն բարութեամբ՝ և սեխենոցիւք՝ բամբակօք՝ և բրնձիւք լին և բուսական բերիւք և արդասիւք ըստ ամենայնի յղացեալ, Խոկ զսուրբ Աթոռս և աթոռայինն հանգերձ մեր զիւղիւն և այլ հայակուտ բաշմութեամբ։ և մերձաւոր աղքատ տաճիկօք ոմամբ՝ որք ի սուրբ Աթոռս էին ապաւինեալ, թողին մնալ ի տեղին, այնու յուսով զի թերեւս սրբազն, Հայրապետն մեր՝ միջնորդ լեալ ի ձեռն բարեխօսութեան, պաշանաց և խոստմանց՝ կարիցէ շաբարյն համոզել ի խաղաղութիւն, և զգալն նորա խափանել, և զերկիրս մեր աղքատէ քանզի՝ ինքն իշխաղն կոչեւց դղբազան երիցս առ ինքն, հանգերձ նախարարօքն իւրովք մեծաւ պաղատանք

խնդրեաց ի նմանէ կամ զթուղթ աղաչանաց զրել և զմարդ յղել ի Թիֆլիզ, և կամ ի գալն նորին ընդ առաջ գնալ, և որպէս և իցէ կերպիւ զհնարս փրկութեան գտանել, Աւան որոյ, Սրբազնն նախապէս զգիր աղաշանաց զրեալ ընդ խղճալի և ցաւագար սեղապահ Մկրտիչ նպիսկոպոսին Ծովոթեցւոյ և ընդ աթոռակալ Գալուստ նպիսկոպոսին Աշտարակեցւոյ յղեաց առ արքայն, և նորա մերձ ի Թիֆլիզ ի ճանապարհին հանդիպեալ էին և ըզթուղթն մատուցեալ նմա, և զհօրն հաւատաց վասն պատժոյն Սուբոմայ պէս պէս պաղատանքը ասացեալ էին, գտնեաց առ ի խնայել ի քրիստոնեաց ն. թէպէտ սակայն՝ նա ամեննեին ոչ էր անսացեալ, այլ զպատասիանիս թղթոցն առ Սրբազնն և առ խանն (խստարտութեամբ) զրեալ, Եւ յետ երկուց աւուրց ինքն արքայն հանգերձ Բ. որգուղվն և անթիւ զօրօք եկն ի սահմանս Երևանու, և սկսաւ զնազանու տաճիկսն և զէկզիս և զայլ բարբարոս, որք ժարաւրիք էին արեան քրիստոնեալից, յառաջագոյն սապատակ սիրուել առ ի քակել և աւերել, թալանել և կողոպաել և վերջապէս հրդեհել զգիւղորայսն նախ քան զիւր հասանելն. որք և եկեալ կողոպատեցին զվանորեայսն և զգիւղորայս և զեկեղեցին նոցին, նախ զսուրբ Կարապետ զսուրբ Գէորգ, զԿարրի, զՄօղնի և զՆշտարակ, զտէրունական և զօրբոց պատկերն և զայլ սրբութիւնն զնաշկալս և զամենայն սպասուն ոտից կոխան առնելով զարդամերկ և անմարդաբնակ արարին և զըրբուրց զիւղորայսն երկրիս, զչեռաւորսն և զմերձաւորս հուրբ կիզեալ յաւեր գարձուցին, Եւ իրու ինքն արքայն մերձ եղեւ, սրբազնն զլիսաւոր եպիսկոպոսք, այսինքն է ցաւակից և խորհրդակից սրբազն հարբն մերով Տեառն Դուկասու և այլովք, հանգերձ ուտելի ընծայիք զնացաք ընդ առաջիւք զնացաք ընդ առաջ, և առ երեսս վայր ի վերոյ սէր ցոյց ետ, և ոչ որպէս երկին և եռանդն, և եկն բանակեցաւ ի գեօլն սրբոց Աթոռոյս Օշական, և մեր ընդ նմա, և անթիւ զօրօքն անդ մնացին, մինչեւ ցլ օր, այնու անօգուտ յուսով (որք և ասէին), որպէս թէ նախարաբն իշխողին մերոյ, որք էին ապստամբք ի նմանէ ի ծածուկ, զնա ըմբռնեալ տացին ի ձեռս որ և երեւեցաւ սոււր, Բայց՝ զվաղէմի՝ զբարելի՝ և զհնագոյն զեօլն Օշական և զայգիսն մեր, որ անդ քանդեալ հիմնայտակ արարին, զտունսն ի հիմնաց աւերեցին, և զփայտեղէնս այրեցին, և անտի ընդ մեզ եկն ի սուրբ Աթոռս, հանգերձ օրհնեալ որդուղվն իւրովք, Դաւիթ սարտար փեսայիւն և այլ երեւելի նախարաբն և ամենայն զօրօք անթուելոք, և բոլոր եկեղեցական ուխտիւք սպասուք և զարդուք և ամենայն պատրաստութեամբ և զանկականչմանք ելաբ ընդ առաջ նորա որպէս թագաւորի, և հոգեւոր երգօք և մեծաւ պատուով, տարածմամբ զոյնզգոյն սփոռցից, ենթ ոտից պար-

1. Զօրի բլուր բաց և բողնուած։

2. Ամսարուի եղբ բաց և բողնուած։

զելոց, մուծաք յԱստուածակերտ սուրբ տաճարն երկնանման, և բարեկարգ արարողութեամբ հանաք զԱստուածամուս սուրբ Գեղարդն և զայլ սրբութիւնն, որոց ջերմեառանգ հաւատով երկրպագեալ կատարեաց զուխտն հանգերձ իւրացնովք: (Նւ իւրաքանչիւրոց ըստ հարկին պահանջման, թէ զորքան արժանափայել և ծանրագին ընծայս և տուրս ծածուկ և յայտնի մատոյց Սրբազն Հայրապեան մեր հագելոյս, զայն խահմաւթեանց ձերոց թողումք իմանալ): Նւ իրեւ սկսաք զԵրեակուր պատրաստել որպէս և օրէնն և արժանն էր առ ի պատիւ չկամեցաւ ագանել առ մեզ և մնալ ի գիշերին, այլ ի նոյն օրն հանգերձ զօրք իւրագիք զնաց ի Փարաքար զիւղն: որ մերձ յԽրեան, և անդ ի լայնանիստ՝ ի նորատունկ և ի ծառաւետ յայգւուն սրբոյ Ամոռոյս բանակեցաւ սակս մեծապարիսպ գոլոյն և նստաւ անդ մինչեւ ցամիս երիս, և ի բազմութենէ բարբարոս զօրացն ընդ փոշոյ հաւասար եղաւ ընդ գեօղին Օշականու և այգեացն մերոց անդ եղելոց, և արմատախիլ արարին զամենայն ծառս և զթուփս, և պաւառոք անասնոց լցին. զպարիսպ ծակոտեալ քայլայեցին և յաւեր զարձուցին, Նւ երանելի Սրբազն հանգերձ իւր չարչարակից և վշտակից Առւկաս սրբազնիւ հարբն մերով և այլ իւրային հայրապետական բանական՝ վրանօք և ամենայն պատրաստութեամբ զնացեալ ի յօրուո կոչեցեալ բանակն՝ ուր արքայն էր: մերձ առ նա ի յայգւուն մերում բանակեցաք ի մէջ փոշուոյ: այսինքն թօղից և զարշելի հոտոց: առ օրհնեալ արքայն երթայք և զայաք վասն զիրի՛ճայս առնելոյ և ի խաղաղութիւն համոզելոյ զարքայն և զխանն մեր ընդ միմեանս ի ձեռն երթեւեկութեան մարդկանց և պէս պէս թղթոց: մինն զանմիւ գըրամս պահանջելով և զպէս պէս անկարելի խնդիրո յառաջարելով: Նւ բերդարգել միւսն լսելով զաւերութիւն և զԾրկիզաւթիւն, զքանդումն և զաւպականումն երկրին և բոլոր զիւղորդիցն: խստաս սրտեալ զընդդէմն պատասխանէր: և լուսահոգի Սրբազնն յերկուց կողմանց զմեծ վնասս զցաւո և զնեղութիւնն (թէ ո՞րքան) կրեր (զայս ծանուցանել ոչ է կարելի, քանզի որ ինչ պիտուանայր ի բանակին թէ ուտելի թէ ընկելի, և թէ այլ ինչ, ի սրբյ Ամոռոյն գայր: թէ վասն իւրն և թէ վասն այլ թաւատաց: որք էին նախարարը նորին): Նւ մէծագոյն վնաս մի ևս այս էր, զի զըրքն արքային յօրժամ զնացեալ մարտնչէին ընդ բերդարգել զօրացն խանին յարտաքուստ և երբեմն յաղթեալ զամանս կոտորեին և զօմանս գերեալ ի բանակն բերելին, յայնժամ այն գերեաց տեսարքն որ ի բերդն, թղթով և գիտութեամբ խանին զաղերսանաց զիրս գրեին առ Սրբազնն առ ի աղատել զգերիս իւրեանց ի ձեռաց գերողացն և յետո առ ինքեանս գարձուցանել, և Սրբազնն ևս ոչ կարեր և բաց ասել վասն ապագայական երկիւղին, այլ թէ

կամայ և թէ յակամայ յոյժ ծանր գնով և նազա զրամով զգերիսն աղատեալ, յշէր և տեարբն սը նոտի սանատ և գիր տային առ ի վճարել. յետոյ ոմանք տային և ոմանք ոչ. յայսմ կողմանէ բազում զրամավանութիւն եղեւ սրբոց Յմոռոյս և գիտացաւութիւն մեծ և Այլ և քան զայս մեծա գյոն վնաս ցաւ և արտմութիւն և առիթ մահար հիւ հիւանգութեան այն էր լուսահոգի Սրբազնն, որ թէ ընդ առաջ եղանելն արքային և թէ ի բանակի անդ ի բազում առուրս, սղոդ բանիւ և աղերսարանութեամբ թէ որպան միջնորդ և բարեխօս եղեւ և զթաշարժ խօսիւք զիրի՛ճայս արար վասն խզմալի երկրիս և սակս աղքատ ժողովրդոց քրիստոնէից և եկեղեցեացն, առ ի խնայել և ի գութ շարժել և ողորմիլ նոցաւ բայց նա վասըն մեզաց մերոց խստասրտեալ՝ ամենելն ոչ լուաւ. և ոչ անսաց այլ ի մէջ զիւանի (ընդէմ բարեպաշտութեան իւրոյ) հանգէպ երեսաց Սրբաբանին ասաց զրտառու խօսս զայս թէ ևս ի բնէ անտի այսինքն ի մանկաւթենէ զսովորութիւն և զրարս զայս ի յիս բնաւորեալ ունիմն զի աղաւաւորաց զաղերսն զիրի՛ճայս և զրարեխօսութիւնն եմէ կամ եղաւ ինձ ի յառաջին անդամն լսել: բարեւոր է իսկ եթէ ոչ, թէ բիւրիցս կրկնեսցէ բնաւուցին ոչ անսամս և այլն: Յորմէ կարեվէր խոցեցաւ ի սիրս և ի միտս կենամաշ Սրբազնն մեր երանեալ: Բայց առերիս ոչինչ ասաց, այլ խնդամիտ զինքն երեւեցոյ ի հանգիսի: քանզի սոյն այս (այր) արքայ: ի յառաջին և յերկրորդ նուագին: յորժամ գայր յերկիրս մեր, սոյն այս Սրբազն ի ընդ առաջ եղանելն և ի տեսանելն զմիմեանս բացով զինով և բոկ ոտամըրք ի վրանէ անտի աճարիալ ընդ առաջ եղանելն և չերմն սիրով զաջն համբուրկիով մեծաւ բարեպաշտութեամբ զօրհնութիւնն խնդրէր: և որ ինչ իրիճայ: այս է օրինաւոր խնդիր վասն օգտի հասարակին եղանել ի բերանոց Սրբազնին: զայն ոչ երկրորդէր, այլ յօժարակամ սիրով կատարէր: նոյնպէս և նա՝ սմա կըրկնապատիկ առներ: Խսկ այսմ նուագի ի մեզաց մերոց բազմութենէ զնշան ինչ այնմ սիրոյ ոչ երեւեցոյց: այլ զնորին ներհակն: Աերջապէս բերդարն մնացին ի խստասրտութեան ի կաման իւրեանց յամառեալ: զնալամդութիւնն ինչ ոչ ցուցին երեկը: այլ հրացանիւք, այսինքն թօփիւք և թիմանիւք: միշտ պատճարալմէին: մինչ զի զերկուս մեծազի և զինաւոր թաւատս սպանին ի նոցանել: թէկ ինքեանք ևս ի նոցանէ անմիւ սատակէին: Նւ վասն ամրութեան բերդին Նըրեանու ո՛ կարէ ճառակ: որոյ տեսողքն վասն անսառիկ գոլոյն ապշեալ հիանան (և ասի բան թէ՝ Թայհմազն այսինքն Շահնատիրն յօրժամ եկեալ տեսալ և տեսեալ է ըլլը բերդն: հիացմամբ ասացեալ է թէ՝ (աւէն զայրիանն աթասի գեօռապեհօռ օլսուն): Նւ բարեպաշտ արքայն եթէ զինչ հնարս եցոյց իւրով աստուածա-

առոր հանձարեղութեամբն վերջապէս այս է Զի զրանս յուսագրականս պէսպէսս գրեաց և գրեցոց առ մեր երկրացի հայկազուն խզճացի ժողովուրդոն ոքք անցեալ էին ի գոյշմանս Բայազիտու, հրամանաւ խանին առ ի պահպանել յերկիւղէ, գրելով այսպէս թէ՝ «վասն զիւրութեան» աղասութեան և այցելութեան ձերոյ եկեալ եմ աւետիս ձեզ լաւապէս գիտեմ զի զուք ևս զայս կամիք ուրիմն փութանիք ի զալ իւրաքանչիւրդ ի ընակութիւնս ձեր զի բարւոք Կարգաւորեցից զլեղ և զուք վարդից և վաստակոց ձերոց մուղայէթ լեալ լաւապէս ապրեսիցք և վաշային Բայազիտու ևս գրեաց առ ի յշել և թողուլ ի գալ ։ Եսկ մերայնքն զայս իրեւ զաւետիս կենաց համարեալ և ի յամենաւ յազմ ուն Քրիստոսի՝ և ի փրկաւէտ կոչումն քրիստոնէական անուանն աղասինեալ և ի նոյն իրաբուսեալ, յօժարակամ սիրով եկին իւրաքանչիւրդն ի գեօզս իւրեանց բայց մինչ դտին զտունս իւրեանց աւերեալ, զիայտեղէն զիստեղէն, և զայլ պիտանի ինչս և այրելիսն հուրբ կիզեւուցորեանս զգարիս և զայլ ինչս և ուտիլիս թէ զածուկս և թէ զյայտնիս ընդ բոլորին յափրշտիքալ, և զոմանս անձինս ոքք ի պահպանութիւն տաց իւրեանց մնացեալ էին և կամ յերկիւղէ ի տեղիս տեղիս զօղեալ, զայնս ի յանօրինաց գերեալ, դառն տրամութեամբ և յոցոց հանելով զինանս իւրեանց ողբային ։ Եւ ծայրագոյն քան զայս և առաւել ողբոց արժանի այն էր, զի օր հնեալ որբայն առ երեսս իր ի պահպանութիւն նոցա առ իւրաքանչիւր գեօզս զտաճիկ զօրս բազումս եղ իր զնորագոյն վարս և զիվաստակս տալ առնել բայց ի ծածուկ պատուիրեալ էր առ ի շմողուլ ումեք ցրուիլ, այլ գգուշութեամբ պահել ։ Եւ տոյ զր ինչ հրամայիցէ այնպէս առնել ։ Եսկ երբ ետես, թէ անհնարին եղեւ բերթ առնուլ, քանիցս անգամ զրեցոց Սրբազնին առ խանն, իրը թէ ահա հաս ժամ, եթէ չհնազանդիցիս կամաց իմոց, զերկիրք անմարդարնակ եմ առնելց և զքել ի վերին թշվառութիւն (այսպէս ձեռագրում) հասուցանց և խանն խստապրտեալ զընդգէմն պատասխանէր, Եւ մինչ կամեցաւ վերագառնալ յետս, յառաջ քան զերիս աւուրս հրամայեաց մեծաւ սաստիթեամբ ամենայն անողորմ տաճիկ զօրաց իւրոց ըլլապ (այսպէս) տափնապաւ զբոլոր խզճացի, աղքատ և տառապիալ մերկ և բոկ ժողովուրդն երկրիս ունեցանելի յերկիրն իր ընդ բարբարոս և խանին հազանձ զօրացն իւրոց ։ Յայնժամ զժուղիմ մի ևս փիրեն վերջին վիճիռ զրել ետ — «միջի» —

Սրբազնին առ խանն վասն արտասահմանութեան երկրականացն և աւերման երկրին, թէ պատիւ և այնպէս է առնելոց, եթէ ոչ անսայցես ։ և զայս թուղթ պատշաճ էր ի ձեռն զիսաւոր և պատուամեծար վարդապետաց առարել ուրպէս իւ հրամայիս եր արտապար ։ անապար ն վրեւանու կարի երկրազալի եր և բարբարոս զօրք լցեալ, գղեկապետն հանգերձ ստորագրեցելովքն դառնացեալ, ցասուցեալ և յոյժ սրտմտեալ, և թուղթն ևս բօթատու և կոկծեցուցիչ, և ամենաերեան ի բարկութիւն զըդեցեալ, Առան որոյ կարի զժուարին էր յանմ գառն սոսկայի և մահարի ժամուն ումեք երթալ և տանել զայն թուղթն առ խանն ։ Սրբազնն հրամայեաց տեղապահ Մկրտիչ վարդապետին հոգ առ ի տանել իսկ նա յառաջադոյն յերեկոյին յանձն էառ և յետոյ ըշ հիւանդութիւն և զերկիւղն պատճառելով չեառ յանձն, ապա տիրուր զիմաք և մեզմն բանիւ հշարց ցպատուական Հայրն մեր ասելով ։ Դուկան վարդապետ գու կերթասաւ Յայնժամ համեստ և հեղանձն հայրն մեր ըստ հոնարհ և կամակատար բարուց իւրոց (որ ոչ էր զհրաման ինչ ի մեծագունէ իւրեւ ի բաց ասացեալ), յօժարակամ սիրով յանձն էառ ի գնալ զերկիւղ մահուան ի բաց գնելով ։ բայց ի զիշերին այնմիկ յերազի տեսեալ էր, զի երկու ահազին գոմէշը մեծաւ ցասմամբ եղջերօն իւրեանց, և երկոցունց եղջեր ծայրագոյն ընդ միմեանս ւլլիմակցուլ, մաքառելով ինքն մնացեալ էր անվնաս ի ճակատամէշս երկուց աշեղ զոմշոց, իրեւ զայս տեսալ էր յերազի, ի միտս իւր մեկնարանեալ էր թէ որպէս ի ողորիլն եղջերաւորացն ինքն ի միջի զուղչ առանց վնասու էր մնացեալ ։ Նոյնպէս և ի գտանիլն իւր ի մեջ երկուց եղջերասարաւ իշխանութեանց ի վերայ միմեանց զայրացմամբ ոգորելոց ։ Աստուծով ի գնալն և ի գալն իւր առանց իմիք վնասուց է լինելոց (որպէս և եղեւ իսկ), Առան որոյ Հայրն մեր պատուական զյօյն իւր առ Փրկիչն տիեզերաց Տէրն մեր Ծիսուս Քրիստոս վնելով միրով «Տպային» թուանձնով ելեալ գնաց յերեանու բերդն, (յայնըմ ժամու յորում բանակն արքային ընդ իւրեարս էր իւառնեցեալ և պատրաստեալ էին ի գնալ և Ապիազքն ի զիշերի ցրուեալ էին և շուրջ զերդովն թագմագուր շըջելով զաւարս որոնէին). և ի մերձնանալն ի ձորն երեւանու, ուր անցանի գետն Հրազդան ի յանցանելն ընդ կամուրջն և մօտելն ի գուռն բերդին բազմութիւնք մարդկանց յաջմէ և յահեկէ, ի զիմաց և ի թիկանց որք անգն կային, այնք ոքք կարի վնասակիրը էին, ի յայրեցմանէ սրտից իւրեանց ցատանունն կրծտելով զպէսպէս տգեղ բանը և զհայ հոյութիւնն իւրանցավայելս յիմարսար

— «ասեին» — բարբանջէին (իրը թէ՝ զձեր հաւատակիցն բերեալ զերկիրս և զտունս մեր աւերեցիք, և զայլս այսպիսիս՝ խառնիճաղանձ տաճիկքն ահացուցանելով ասէին, բայց՝ ոչ իշխէին մերձենալ յերկուդէ խանին) ։ և իրեւ գնացեալ էր առ խանն՝ շնորհիւ Ցեառն յոյժ սիրով ընկալեալ էր, և քաղցրութեամբ զբաղում բանս հարցեալ, և ընդ միմեանս յօդուտ ժամ խօսեցեալ, և — «իրեւ» — մինչ զգաւտասիսնին առեալ էր, օրն երեկոյացեալ էր. և ի զիշերի ի մթանն ի դառնալն բազումով խումրով լէզիեաց ի ճանապարհին ի տեղիս տեղիս (պատահեալ էրն և խօսեցեալ և ոչինչ վնաս հասուցեալ նմա. և եկեալ էր ի բանակն առ արքայն և առ որդիս նորին մինչ հանդերձեալ էին ի գնալ. զո՞ր ինչ տեսնեալ և լուեալ էր ծանոց արքային և զերադարձաւ ի սուրբ Աթոռս առ Սրբազնն՝ բերելով զպատասիսնին տարեալ թղթոյն. ընդ այն յոյժ ուրախացեալ օր հնեաց. Արդ՝ իրեւ չուեաց արքայն յերկրու տանելով ընդ իւր զերկրականս — լայննամա — իսկոյն ելին բերդարգել տաճիկքն ծարաւիքն արեան քրիստոնէից և գտին զգեօղու զտունս և զբնակութիւնս իրեանց աւերեալ և զամենայն ապրուտտոն յափշտակեալ և ի վերջին թշուառութիւն հասեալ սկսան այնուհետեւ իրոխտալ ի վերայ սրբոյ Աթոռոյս և Սրբազնին և զպէսպէս երկեցուցիչ բանս խօսիլ. վասն որոյ երանեալ Սրբազնն և ամոռուայինքն ամենայն հանդերձ գիւղացեօք մերովք և այլովք առ մեզ եղելովք՝ երկնչիլ սկսար և զպէս պէս զերկիւլս ի միտ բերել. մինչ զի՞ ելեալ ի տանիս հայէաբ ի ճանապարհոյն Նրեւառու մասածելով թէ՝ դուցէ իշխօզն բերդին ի դառնութենէ և ի սաստիութենէ տըրտմաւ սրտմտեալ զզօրս առաքենցէ ի վերայ մեր ի յասպատակութիւն և կամ զտուգանս տռուուկ կամիցի. վասն զի՞ ի գլխաւորացն հայոց առ ինքն եղելոց, որբ — «զնացեալ» — մտեալ էին ի բերդն առ ի պահպանիլ. որբ էին ժ խզալի անձնիք, զմենամեծ տուգանս ինզրեաց. զրպարտելով զնոսա թէ՝ դուք հաւատակից դուով թշնամւոյն մերց դաշնադիր էլք լեալ նմա և զիսայինութիւնս առնել կամէիք մեզ և զայլ այսպիսի ստարանութիւնս բարդելովք ի վերայ խղճալեացն և ի վերայ երաքանչիւրոցն ըլլիստարարոյ և զժանտ զինուորս եղեալ խստութեամբ և ճշափու պահանջէին ի յոմանց թէ թուման, յոմանց թձ, և յոմանց ԱՃ, աւելի քան զբիթ թումանս պահանջելով նեղէին և չարչարէին զնոսա գանիւք և բանտիւք: Խսկ ողորմելիքն այնոքիկ անձարացեալք զինչս և զստացուածս, ըլլտունս և զայդիս իւրեանց վաճառելով և ի աաճկաց ծանր վերադրօք զդրամս պարտք առնելով հազիւ հազ ետուն. և վերջապէս բաղումք ի յետին

թշուառութիւնս հասեալ հոգօք և տառապանք վարանեալ փոխեցան ի Տէր, և զընտանիս իւրեանց թողին ի գառն աղքատութեան: Խւ զինի զնալոյ արքային յերկրու մեք առ խանն շուտով զմուղթ միթմարտութեան գրեցաք, և զջնալն նորին ծանուցաք. և յետ երկուց աւուրց Սրբազնն հանդերձ եպիսկոպոսք: Խաչիւ և գաւաղանաւ և ամենայն հայրապետական բանակք գնացաք ի տեսութիւն խանին, և ի մտանելն ի բերդն և ընդ անցանելն ընդ խառնիճաղանձ բազմութիւնս տաճկաց. և ի տեսանելն զնաշն և զմեզ զամենեսեան, թէ զո՞ր քան բարբանջմունս արարին առաջի քմաց իւրեանց. մին ասէր (օլքեամզ յըլսան գեալտի) և միւն ասէր (բարիքեալլա զօճաման խալիֆայ օլքեամզի յըլսարըն խալամի գէյտըն) և զայլս այսպիսիս, բայց ի մտանելն առ խանն, կարի սիրով ընկալաւ, և շնորհակալ եղկ վասն աղտաելոյ զմնացեալ հայ և տաճիկսն ի զերութենէ, որբ ընդ հովանեաւ սրբոյ Աթոռոյն մերոյ ամրացեալք էին. և ծանր խիլայ ևս ետ. և Սրբազնն ևս վասն շիջուցանելոյ զհուր բարկութեան և գաւառութեան որ ի սիրտ բռնաւորին և այլ տաճկաց ի վերայ բրիստոնէիցս նախահոգ լիալ՝ իր զին աղտառութեան զմենձագոյն թուովք զրամս ինչ ետ ի յըմբերանումն նորին կամաւորապէս. զի՞ մի՞ ինքնին յակամայ զնորին կըրկնապատիկն խնդրեցէ, և յընդգիմանալն մեր՝ սրբոյ Աթոռոյն զերկին վնասոս հասուսցէ: Քանզի ի գայն ևն ի զնալին՝ արքային յերկրու մեր և ի զնալն աստի թողեալ զաւերումն գիւղօրէից, այգեաց և այլ մուլք կոչեցելոց և միւս մասրաֆիցն սրբոյ Աթոռոյս, յատկապէս նազտ (բռ թէ.) : (Երկու հաղար թուման) այսքան վնաս եղկ և եւս զերկրական մերազնեայն զրս որպէս զգերի առեալ տարան, որոց տեղի բնակութեան ոչ ետուն, այլ ի բացեայ ի յանչէն տեղի յերկար ժամանակս բնակեցուցին պանդիտութեամբ: և զակնածութիւն ինչ արարին. վասն որոյ՝ կեսք ժանտամահիւ, կեսք օդով խստութեան, կեսք սովու և կեսք այլ իմն ցաւօք ըստ մեծի մասին հանգեան ի Քրիստոս ի յօստարութեան և ի գառն պանդիտութեան կարի հեծեծեանօք: Խսկ որբ մնացինն, զինի միջոցաց ինչ՝ միջնորդութեամբ և պէս պէս թղթագրութեամբ և մեծավատակ աշխատանք հոգելոյս Հայրապետին, արքայն Արաց և իշխօզն մեր ընդ միմեանս հաշտելով և յամ ամէ զմենձագոյն տուրս տալ խոստանալով նոյնոյ արքային, բազում աղքատութեամբ վերագարձան յերկրու մեր և մեծաւ հայթայթանօք սկսան աշխատել և ըզշնարս կեցութեան գտանել. զի վասն անվատակ մնալոյ երկրու մերոյ, սովոն ևս տիրեալ էր. և յայնմ միջոցի Աստուծով միայն սուրբ Աթոռոս էր և շինութեան: Աան որոյ՝ տաճիկքն աեսեալ ըզշնութիւնս սորին և զաղքատութիւնս իւրեանց, որ ըստ օրէ սկսան կատաղի և Արութեամբ յառ-

1. Այստեղ փակադիծ մեմբ ենի փակում, մեռադրի մոռացուած է:

հելի ի վկրայ սրբոյ Աթոռոյոյ և զրագում վնասա
հասուցանել ջանալ. և սպասէին դիպօղ ժամու և
զիտէին ևս զծանը հիւանդութիւն լուսահօգույն
երկար միջոցաւ. և զիտէին մահուան նորին առ
ի ջարութիւնս իւրեանց ի կիր տրկանել. ումանք
զջխարս և զտաւարս էին նշանադրեալ առ ի աս-
պատակել և տեղի ասպատակեալ տաւարաց իւրեանց
և ոմանք զայլս. վասն որոյ՝ ընդ ցայդ և ընդ զի-
շեր ըստ ի յորս՝ այսիմքն ի մարալ՝ մտիալ զալանի
անտիրացեալ ժամու սպասէին և խումք խումք եր-
թային և զային. Ահա այս էր պատճառն սասա-
նութեան երկրիս մերոյ և վրդովման զորս ծանու-
ցաք սիրելեացք փոքր ի շատէ ստուգութեամբ
Արդ՝ Հոգելոյս և երանեալ Հայրապետն մեր Տէր Սէր
Սիմեոն իւրով խորախորհուրդ և նրազդնին հան-
ձարովն զայս ամենայն զիտելով Ի աւուրբք յա-
աջ քան զերաւնիկ մահն իւր ի հազորդիլն մորմ-
ոյ և արեան Կհնարարին յօր շարաթու նաւա-
կանեաց Արդավառին կոչեաց զրուլոր եպիսկոպո-
սունն և ծանոց զմահն իւր և յիշեցոյց զալե-
կնեալ վրդովմունն երկրիս և զկատալութիւնն
մինիքոր տաճկացն. և զինի վախճանի իւրոյ զան-
տիրութիւնն սրբոյ Աթոռոյոյ և պատուիրեաց նոցա-
զոյոյ լինել յամենայն կոզմանց և յատկապէս
—ինազպյնս—ծերունազարդ Մարկոս արքեպիսո-
պոսին (որ էր յայնմն ներկայով լուսարար սրբոյ
Աթոռոյոյ—ու զիխաւոր ի պատուանձար ի մէջ
բախից եսխիկողոսայ ըսդ բարձրագոյն պատօնի
լուսաւուրեանն—համանդամայն և խոսուցանա-
հայր—լուսանողոյնն—ինքեանն) մընարար և որչազկի
և կտակորէն ի խոստովանիլն ասացեալ էր թէ՝ «ես
զուկաս վարդապետն յայսքան ամս յայս միտս
պահեցի ի սուրբ Աթոռուզո և առ իս և ոչ առա-
քեցի ուրեք ի նուիրակութիւնն որ զինի վախ-
ճանի իմոյ յաջորդարար նա լիցի Հայրապետ և
կառավարեացէ զսուրբ Աթոռոս յայս վախճանին
և վրդովման ժամանակիւ. Զայս կրկնելով և երեք-
մելով իրեն զկատակ աւանդեալ ի ձեռն խոսովանա-
հօնն վերոյ յիշեցելոյ. և ինքն բարի մահուամբ և
մեծաւ հեշտութեամբ հանգեաւ ի Տէր. զորոյ ըդ-
հոգին Տէր լուսաւորեացէ և ընդ երջանիկ հայրա-
պետն գասեացէ և պատկեսցէ. Ամէն

Խոկ զկնի թաղման նորին, բոլոր միաբանքն սրբ Աթոռոյս տեսանելով զվաճաւութիւն ժամանակին և զգրդոգումն երկրիս, և զրազմութիւնն գողց և աւազակաց, աւարառուաց և առաստանոցաց, որը շուրջ զԱթոռովն ել և էջու առնեն և դիմու ժամու սպասէին (որպէս և պատմաց ի վեր), երկուցեալ աշխ մեծաւ, ի մեծն Պօյիս և յայլ հեռաւոր տեղիս—անազանի—զեկուցանելն անազան, յապաղումն և յանցումն փարկեալ՝ գուցե (ասեն) երկար միջոցաւ անտեր և անզլուի մնալով ուրբ Աթոռու զնասու իմբիք և մեծագոյն դիպուա-

ծոյ հանդիպեցի, և ի սաստիկ նեղութեանց անտի
ոչ կարելով միաբանից զիգուածոց տևել և տոկուլ-
ի տեղիս տեղիս ցիր և ցան լինիցիմք. վասն որպէս՝
զներկայական երկիւղն և զալէկոծութիւն ի միտ-
բերեալ՝ և զօգուան սրբոյ Աթոռոյս խորհեալ հան-
գերձ երկրականօք մեծամեծօք և փարումբը զկտակն-
լուսահոգւոյն ի մէջ բերեալ և մեծահանդէս սիւն-
հոդոս արարեալ, ընտրեցին զընտրեցեալն յԱստու-
ծոյ, զբարեհաշակեալն և զսիրեցեալն իշազգս մեր և
զյուղնաշխատ միաբանն սրբոյ Ըստուածակերտի. Ամո-
ռոյս զշոգեոր Հայրն մեր զՏէր Դ.ո.կաս-կարենցին-
արքեպիսկոպոս Կոբընեցի ի Հայրապետութիւն. Խոկ-
նա ըստ հեզ: առանձնասէր և անփառախնդիր բա-
րուց իւրոց սկսաւ զայլ և այլ արդելառիթ պատ-
ճառս յառաջադրեալ և զինքն անբաւական անար-
ժան և ըստ ամենայնի անկարող վարկանել: և ի տեղ-
ուղեն իւրմէ ի սիւնհոդոսւ անտի ի գուրս ելանել
կամքը. և զորքան ստիպէին և աղաչէին: նա ոչ ան-
սայր. և յայնմ սիւնհոդոսի: որբ Նստեալ կային թէ
վանականք և թէ աշխարհական իշխանք մեծամեծք
և փորոշք և մանաւանք արքեպիսկոպոսունք հա-
մակեալ և միաձայնեալ զլուսահոգւոյ կտակն ի մէջ
բերելով ասէին. «ի յազգի և ի միջի մերում գու ես
ընտրելին և զիխաւորն և ազգն ես զքեզ էին ընտ-
րելոց ի հարկէ: որում արժանի իսկ ես, և մանա-
ւանդ ներկայ ես եթէ ոչ յանձն առնուցուս յայոմ
երկիւղալի և նեղ ժամանակիս լինիլ Հոգաբարձու
և պահպանիչ սրբոյ Աթոռոյս և պետ և գլուխ
մեղ և ազգիս մերցյ սուրբ Աթոռս և մեք որ ինչ
վնասու և հանդիպիցիմք: դու ես՝ պարտականն
եւ՝ գլխաւոր պատճառն. և երանելի Հայրապետին
կտակին չընդունօգնու: և այլ այսպիսի բանիւք զինիդան
տպաւորէին ի միտսն (ողորմաղերո բանիք ըստէպը
տէպ աղաչէին). Եւ նա ոչ կարացեալ ընդգեմքառնալ
աղաչանաց բազմութեան, յակամայ կամս յօժարե-
ցաւ ի խնդիրս նոցա. և նորա մեծաւ բերկրութեամբ
և անպատճում ուրախութեամբ: զանգագահնչմամբ:
ի հեղեցական զարդուք և հոգեոր երգօք առեալ
տարան: յԱստուածակերտ տաճարն երկնանման և
առաջի Քրիստոսափշի տեղուոյն սարսափելոյ գերա-
սուրբ Աջոյն համբուրմամբ շնորհաւորեցին զյանձն
առեալ պատուական անունն Հայրապետութեան. և
մեծաւ հանդիսիւ և նոյն եկեղեցական զարդուք
տարեալ նստուցին ի մեծ Աեհարանն (և զայս այնու-
զիտմամբ փութացան շուտով առնել այսպէս: եր-
կուցեալ զուցէ ի ծանրութենէ գերաբարձր և Աս-
տուածային լծոյն՝ փոշիմանեալ յեսոս զարձից): Խոկ-
ի յառաջիկայ կիւրսակէին: որ էր Վարդապատի երկ-
րորդ կիւրսակէն: ի նոյն 1229 թուին և յօդոստուի
2: օծմամբ Հոգւոյն Աստուծոյ մեծահանդէս բազ-
մութեամբ կացուցին ընդհանրական Կամուղիկոս
և ծարբագոյն Պատրիարք և պատուական Հայրապետ
ամենայն Հայոց և սրբոյ Աստրելականի և Աստու-

ծայնոյ Աթուոյս Խջմիածնի և Նստուցին յ Աթուս
սրբոյն Գրիգորի Լուսատուին Հոգեց մերց և Խ-
ամենայն բաղմութիւն զանդրանիկ օրհնութիւն
առեալ ի հոգիս և ի միտու իւրեանց ընծացեալ բերկ-
րասիրտ եղեն միտամեցան և ի բազում տառա-
պանաց և ի պէս պէս երկիւ զալի մոտածութեանց զեր-
եալ զիմաստ վիրառաքեցին Նախասահմանողին և
զայնպիսի գերբնատիր փեսայ պարզւողին Աստուծոյ:
Որում Տէր տացէ զկեանտ խաղաղականս և ընդ եր-
կայն աւուրս արտօնէ, Ամէն:

($\mathbf{1}, \mathbf{2}, \mathbf{3}, \mathbf{4}, \dots, \mathbf{n}, \mathbf{n+1}$)

ՅԱՅՏԵՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջնական առարկան է պահպանը:

ՖԱՐԻՆԱՐԻ ՔԱՐՈՉՆԵՐ

Գինն է 1 ռուբլի.

Քահանաները և իմ նախկին տշակելու-
ները կարող են ամենայն սիրով ձրի ստանալ
օրինակները, ուղարկելով միայն փոստի ծախք
(10 կոպ.):

Գրագիտակաները կը ստանան 40% զի-
ջումն եթէ կանխառ վճարեն զինք և ուս նու-
աղը 10 օրինակ պատուիրեն:

Langkoo. Св. Эчміадзинъ, Типографическому комитету. Съ передачею С. М.

ԱԵԴՐԱՔ ՄԱՆՈՒԵԼ



1. Այս բառը ուրիշ ձեռնույթ գրուած է «արվիտ-իորիա» լեզուած բառի վերաբ:

ՅՈՒԹՎԱԿ ՎԱՐԺԱՄԻԵԼԻ ԳՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԻ
ՄԵԾԻ ԱԹՈՒԹՈՑ Ս. ԷջՄԻԵԾՈՒՐ